Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Գ.Գույանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Աննա Մազլումյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Լեհաստանի »հանրապետություն՝ 2023 թվականի 3-6 ապրիլի.
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԶԾ-ն «ԵՄ շրջակա միջավայրի համար» ծրագիրի շրջանակներում
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն EU4Climate ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ազգային ռազմավարությունների և ներդրումային պլանների մասին» տարածաշրջանային աշխատաժողովին: Ծրագիրը օգնում է ԵՄ Արևելյան գործընկերության վեց երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովային և Ուկրաինային կառավարություններին՝ պայքարելու կլիմայի փոփոխության դեմ: Ծրագրի նպատակն է աջակցել ԵՄ Արևելյան երկրների կողմից կլիմայի փոփոխության հետ կապված քաղաքականության մշակմանը և իրականացմանը, որոնք նպաստում են նրանց ցածր արտանետումների և կլիմայի փոփոխության դիմակայուն զարգացմանը՝ «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի պարտավորությունների ներքո:
   Հանդիպմանը մասնակցում էին վերը նշված երկրների ներկայացուցիչներ:
6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   - Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ազգային հարմարվողականության ծրագրերի ներկայացում,
   - հարմարվողականության ռազմավարության և պլանների ազգային մոտեցումների ներկայացում,
   - ազգային սահմանված գործողությունների տարբեր ասպեկտների գնահատում,

- «Փարիզյան կանոնագրքի» օգտագործման ուղեցույց, հարմարվողականության շուրջ հաղորդակցություններ,
- անդրսահմանային կլիմայի և հարմարվողականության ռիսկեր:

7. **Հանդիպումները, ելույթները.**

Աշխատաժողովի առաջին նիստին ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության հարմարվողականության պլանավորման փորձի Կառավարության կողմից ընդունված ազգային մակարդակով սահմանված գործողությունները կարգավորող իրավական մասը՝ շեշտելով, որ Կառավարությունն ունի և ձեռնարկում է գործողություններ, որոնք առաձնացնում են կլիմայի փոփոխության հարմարվողականության առաջնահերթությունները:
Խոսել եմ փոխվարչապետի կողմից գլխավորած միջգերատեսչական խորհուրդի 3 աշխատանքային խմբերի վերաբերյալ, որն ապահովում է երկրում կլիմայի հետ կապված կրիտիկական զարգացումների քննարկման և վավերացման հարթակը:
Ներկայացրել եմ, որ EU4Climate տարածաշրջանային ծրագրի շրջանակներում մշակվում է Հայաստանում ցածր արտանետումների զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը, ինչպես նաև Կլիմայի մասին օրենքը, որոնք ևս մեկ ձեռքբերում է ռազմավարական ոլորտում:
Ներկայացրել եմ, որ NDC ներկայումս իրականացման պլանը և ֆինանսավորման ռազմավարությունը քննարկվում է Կառավարությունում: Խոսել եմ Կառավարության կողմից ընդունված ՀԳԾ-ի վեց թիրախային ոլորտների՝ ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության, էներգետիկայի, առողջապահության, զբոսաշրջության և բնակավայրերի վերաբերյալ:
Նշեցի, որ 2022 թվականին Կառավարության կողմից հաստատվել է Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության 2022-2026 թվականների ծրագիրը հաստատելու մասին որոշումը, մշակվել և համապատասխան ճյուղային նախարարություններին են ներկայացվել 4 ոլորտային հարմարվողականության պլաններ: Խոսել եմ 2 մարզերի հարմարվողականության պլանների մշակման վերաբերյալ:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում կազմակերպիչների կողմից ներկայացվեց, որ աշխատաժողովի հիմնական նպատակն է աջակցել Արևելյան գործընկերության երկրների քաղաքականություն մշակողներին հարմարվողականության քաղաքականության մշակման գործում: Որպես միջինաժամկետ և երկարաժամկետ Ազգային հարմարվողականության պլանների (NAP) միջոցով կլիմայի փոփոխության անբարենպաստ ազդեցություններին անդրադառնալու անբաժանելի մաս, ուշադրության կենտրոնում կլինի NAP պլանների մշակումից հարմարվողականության գործողությունների անցումը: Շեշտվեց, որ հանդիպման նպատակն է ամրապնդել երկրների ջանքերը ազգային հարմարվողականության պլանների ուղղությամբ և կապ հաստատել աղետների ռիսկի նվազեցման և բնական վտանգի կառավարման հետ: Այն նաև նպատակ ունի դյուրացնել միջտարածաշրջանային փոխանակումը ազգային և

ենթազգային գործունեության վերաբերյալ, տրամադրել ուղեցույց, ընդգծել ձևավորվող լավագույն փորձը և ցուցադրել դեպքերի ուսումնասիրություններ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Ներկայացուցիչները նշեցին, որ երկրների հարմարվողականության ծրագրերի վերաբերյալ կարիքների հավաքագրումը և վերլուծումը, բարենպաստ անդրադարձ կունենա երկրների ռազմավարական ծրագրերում:

**Գործուղվող** **Աննա Մազլումյան**
11.04.2023